

ՄԵԾՈՓԱՅ ԴՊՐՈՑԻ ԶԱՅՆԱԲԱՆԱԿԱՆ ԲՆԱԳՐԵՐԸ

Շարունակելով եւ լրացնելով Լ. Խաչիկեանի աշխատանքը¹, պատրաստում ենք թովմա Մեծոփեցու «Մատենագրութիւն» հատորը, որի համար առանցքային նշանակութիւն ունի Մեծոփափանքի մի դասագիրքը՝ Մաշտոցեան Մատենագրաբանի Հ^{մր} 7117 ձեռագիրը, որ Լ. Խաչիկեանն իրաւացիորէն համարել է «Թովմա Մեծոփեցու գերականագիտական-եզրուարանական աշխատութիւնների մի շահմարան»²: Գործիս ընթացքում նախ պարզեցինք, որ վերջինիս կարեւոր աղբիւրներից մէկը եղել է նոյն Մատենագրաբանի Հ^{մր} 599 ժողովածուն, ապա՝ որ նոյն նպատակի համար շատ օգտակար եւ անհրաժեշտ է զգալիորէն 7117ից արտածուած՝ Մըխիթարեանց Վենետիկի մատենագրաբանի «Քիւրուեան հաւաքածոյ»ի Հ^{մր} 225 ձեռագիրը³:

Այս երեք ձեռագրի համադիր քննութեան ընթացքում նըկատեցինք, որ Ա. Արեւշատեանն իր երաժշտագիտական արժէքածոյ»ի Հ^{մր} 225 ձեռագիրը:

1 ՏԵ՛ս ԹՌԱԾԱԿԱՆ ՄԵԾՈՓԵՑՑԻ, Պատմագրութիւն, Աշխատախրութեամբ Էւլուն Խաչիկեանի, Երեւան, 1999:

2 ՏԵ՛ս ԼԵՒԻՆ ԽԱՇԻԿԵԱՆ, Թովմա Մեծոփեցու Մատենագրութիւնը.- Աշխատութիւններ, Հռ. Գ., «Նախր», Երեւան, 2008, էջ 691, հմմու. էջ 668-98. Նախորդ պատգրի (տե՛ս ծ. 1, էջ ԼԵ.) խմբագիր Ա. Սահակեանի քմահաճութեամբ այս ուսումնասիրութեան խորագիրը դարձել է «Թովմա Մեծոփեցու կեանքն ու դործը»:

3 Երախտագիտութեամբ արձանագրում ենք, որ այս ձեռագրի ամբողջական թուային պատճէնը միաբանութեան ընդհանրական արբահայր Հ. Եղիա ծ. վ. Քիւրագիւնանի արտօնութեամբ եւ Մըխիթարեան Վենետիկի մատենագրաբանի պատասխանատու Հ. Վահան Օհանեանի դործուն աշակցութեամբ մեզ համար պատրաստել է Հրայր (Բագէ) Խաչերեանը (ստացել ենք 2008 թ. Հոկտեմբերի 10ին): Այսուհետեւ ձեռագիրս Ք.225 ձևով նշելու ենք շարադրանքի մէջ, Մաշտոցեան Մատենագրաբանի ձեռագրերը՝ Հ^{մր} (համար), երբեմն նաև՝ ՄՄ համառօտմամբ:

ւոր մի աշխատութեան մէջ առաջին ձեռագրի հիման վրայ Մեծոփեցուն է վերագրել եւ նրա անունով հրատարակել «Մեկնութիւն ձայնից» խորագրով մի աշխատութիւն⁴ (տե՛ս ստորեւ, Բնագիր Ա. 18-21... 26): Վերագրման հիմնաւորածութեան դէպքում պարտաւոր ենք այս բնագիրը ներառել մեր ծրագրած հատորի մէջ, ուստի մեզ համար պէտք է կարեւոր լինէին նոյն բնագրի⁵, Մեծոփեցու գրչին պատկանելուն վերաբերող փաստարկեցը, որոնք, ցաւօք, չկան⁶:

Այսուհանդերձ, տեսնենք եղածը. «Տուեալ բնագիրը յայտնի է միայն ըստ մէկ ձեռագրի: Մաշտոցեան Մատենադարանի թիւ 599 ձեռագիր ժողովածուում գտնուող այդ մեկնութիւնը բաղկացած է երեք տարարնոյք միաւորներից, որոնցից առաջինը արդէն լնենուած «Երանելի Բարսոյի յաղագս ձայնից»ի ընդարձակ խմբագրութիւնն է (Բնագիր Բ³.), երրորդը Ստեփանոս Միւնեցուն վերագրուած բնագիրն է (Բնագիր Ե.), իսկ երկրորդը անձանօր եւ իր բովանդակութեամբ շատ արժեքաւոր» (ԱԱ, էջ 71):

Այստեղ կան շփոթներ կամ վրիպումներ, որոնք պարտաւոր ենք ճշգրտել, որովհետեւ կապուած են Մեծոփայ վանքի՝ մեր խնդրոյ առարկայ ձեռագրերի հետ:

⁴ Ա.ՆՆ.Ա. ԱՐԵՒՇԵՍԵՆ.Ն, Հայ միջնադարեան «ձայնից» մեկնութիւններ, «Կոմիտաս», Երևան, 2003, էջ 134 (էջ 135 նոյն բնագրի աշխարհաբարը). գիրքն ունի 189 էջ. այսուհետեւ շարադրանքին մէջ նշելու ենք՝ ԱԱ եւ էջահամարը, բնագրական ընթերցումների մէջ՝ Տ:

⁵ Մրան վերաբերող մեկնարանութիւնները (ԱԱ, էջ 5, 12, 57, 58, 71, 72, 84, 86) մեր խնդրին չեն վերաբերում:

⁶ Միակ փաստարկը, երեւի, յաջորդող հատուածում առկայ «Հաւանաբար» բառն է. «Հայ միջնադարեան «ձայնից» մեկնութիւնների շարքում, յատկապէս Գրիգոր Տաթեւացոց յետոյ, աչքի բնկնող միւս նորոյը, հաւանաբար, պատկանում է ԺԵ. զարի յարմնի մատենագիր եւ մանկավարժ Թովմա Մեծոփեցու գրչին: Իր ուսուցչի օրինակին հետեւելով, նա նոյնագէս կազմել է համահաւաք մեկնութիւն, որը թէն չի կարող մրցել Տաթեւացու «ձայնից» լուծմունքի հետ ոչ իր ծաւալով, ոչ բերուած տեսութիւնների բազմազանութեամբ, եւ ոչ էլ աստուածաբանական մտքի փայլով, սակայն հետաբըրքամիան է յատկապէս նրանում զնտեղուած մի բնագրով...» (ԱԱ, էջ 71-2):

⁷ Սա (ԱԱ, էջ 116) կազմուած է ըստ «ՄՄ», ձեռ. 3276, էջ 86ր, 6616, էջ 39ա-40ր, 2752, էջ 8ր, 1799, 2 թ.», այլեւ՝ 7117, էջ 149ր-150ր: Այսուհանդերձ, խմբագրական-շարադրանքային առումով սա էականօրէն տարրեր է ստորեւ հրատարակուող՝ 7117, էջ 149ր-50ր էջերում եւս առկայ մեր Ա. բը-նագրի 27-38 մասից:

Բ՝ ի փոխարէն պէտք է լինէր β^2 , որովհետեւ գրքի 94, 98 և 100 էջերը բռնող՝ β^2 եւ β^3 համարների «Քննական բնագիրը պատրաստուել է ըստ ՄՄ ձեռ. 599, էջ 42ա-44ա, 7117, 149ա-150բ. Տե՛ս նաեւ Քիւրտեան, Երաժշտութեան մասին երկու հատուածներ նախնեաց մատենագրութենէն, [«Անահիտ» (Փարիզ), 1935/Ա-Բ.], էջ 32-33» (ԱԱ, էջ 100, ծ. 1), սակայն միայն β^3 (ԱԱ, էջ 94) է առնուած Հ՝ 599ի 42ա-3ր էջերից, իսկ β^2 (ԱԱ, էջ 98, 100) առնուած է Քիւրտեանի հրապարակումից⁸. Հ՝ 599 եւ 7117 ձեռագրերի մէջ չկայ եւ նրանց հետ կապ չունի: Այսինքն՝ β^2 է հիմնուած է մէկ՝ Հ՝ 599 ձեռագրի, β^3 ՝ կրկին մէկ՝ Քիւրտեանի ձեռագրի տպագրութեան վրայ:

Մի ձեռագրով կազմուած «քննական» բնագիրն ունենում է, ասենք՝ Եղնիկի «Ճառք ընդդէմ աղանդոց» երկի Մ. Մինա-

⁸ Գրքի միայն հետագօտական մասում է ասուած, որ «բնագրի թնդարձակ խմբագրութիւնը» այսինքն՝ β^3 թ., թ. Քիւրտեանն «առաջին անգամ հրատարակել է» իր «սևիական հաւաքածոյի մաս կազմող մի ձեռագրի հիման վրայ» (ԱԱ, էջ 41 եւ ծ. 85). Աւելացնենք, որ սա Քիւրտեան Հ՝ 40 երկմասն ձեռագիրն է, այս բնագիրը պարունակող առաջին մասն է Մեկնութիւն աղօթից, 1605 թ., Ագան, գրիչ՝ Գրիգոր երէց, ստացող՝ Յովհաննէս կաթողիկոս Սահցի կամ Անթեպցի (կարճ նկարագրութիւնը տե՛ս Յարութիւն Քիւրտեան (ԱՄՆ), Համառօս ցուցակ հայերէն գրչագիրներու Քիւրտեան հաւաքածոյի ի Ուիշխով. Կանգաս. ԱՄՆ.- Բանքեր Մատենագրանի, հա. 11, Երևան, 1973, էջ 417-8): Բնագրիը բռնում է նրա 120ր-4ր էջերը. «Առաջարան կցորդարանի. Խաւաք տեառն Բարսղի (ԱԱ, էջ 98, տպ.՝ Բարսղի)՝ Յարակն ձայնից երդոց, թէ ուստի կամ յաւմէ (ԱԱ, էջ 98, տպ.՝ Հումմէ) գտաւ, զոր թարգմանեաց Մտեֆանոս փիլտրոփուն եղեալ երաժիշտ եւ խելամուս ամենայն ձայնից կենդանեաց - Մտեֆանոս երդիչ եւ փիլտրոփոս (ԱԱ, էջ 98, տպ.՝ փիլտրոփա) թաժանեաց իմաստունն իջ. (26), որ են այսոքիկ բառաշեխ, պոռոչել... այս են խորհուրդ հոգեւորացն եւ Ներեակիուացն. Նոյն ձեռագրից (117ա-20ր) է Քիւրտեանը հրատարակել նաեւ միւս բնագիրը. «Մովսէսի Քերթողահաւարն Յաղակս կարլաց եկեղեցւոյ բացայալութիւնը. Շարադրութիւն շարամանու հոգեւոր երկարանից ըստ Երաժշտական չափուց - Շատամբարձայնութիւնք ստեղնաչափութեան, ութամասնեաց պատկանաւոր ձայնից պատճառք... փառարանիւս ամենասուրը Երրորդութեան նմա փառք յաւիտեանս. ամէն: Ողորմեա՛, Տէր մեր». Մովսէս Մինեցու այս գործը տե՛ս նաեւ ԱԱ, էջ 106-15 Բնագիր Դ. իսկ գերջին հրատարակութիւնը տե՛ս Մատենագիրք Հայոց, Դ. Հատոր, ի. ղար, Անթիլիաս-Լիրանան, 2005, էջ 445-7:

սեանի հրատարակութեան տեսքը⁹, երբեք այս բնագրերի նման պարզ, ընթերցումներից եւ ծանօթագրութիւններից զուրկ շարադրանք չի լինում: Ուղղակիօրէն այս հարցին է վերաբերում իր Բ³ բնագրին վերաբերող՝ Ա. Արեւշատեանի ուշագրաւ մի արձանագրումը. քանի որ Քիւրտեանն իր ձեռագրի վերաբարդում-տպագրումն արել է «նոյնութեամբ, առանց որեւէ ծշտումի, նոյնիսկ կէտադրութինը հաւատարմօրէն օրինակելով (տե՛ս նշ. յօդուածը, էջ 33), ուստի եւ հարկ եղաւ լրջօրէն խմբագրել ընագիրը, համեմատելով այն ՄՄ ձեռ. 599ի հետ եւ կատարելով, որտեղ հնարաւոր է, համապատասխան ուղղումներ եւ սրբագրումներ» (ԱԱ, էջ 41, ծ. 86): Այսոեղ արձանագրենք, որ բընագիրը չեն «խմբագրում», այլ՝ «մշակում» են, որ հիմնականում կէտադրումը, գլխատառերի նշանակումը, ըստ հարկի գրչական սխալների մատնանշումը եւ դժուար հասկանալի բառերի բացատրումն է, ապա՝ 599ի հետ համեմատութիւնը պէտք է արտայայտուած լինէր տողատակի ծանօթութիւններով, որոնք այստեղ չկան (հմմտ. ԱԱ, էջ 98, 100):

Ի վերջոյ՝ նոյնական վերաբարդութեան Քիւրտեանի որդեգրած եղանակը շատ էլ խոտելի չէ, սոսկ անյարմար է ընթերցման համար, ուստի եւ «Անահիտ»ի խմբագիր Ա. Զօպանեանը ծանուցել է. «Պ. Քիւրտեան պահպանած է օրինակչին կէտադրութիւնը, որ բմահան է ու անկանոն¹⁰, բայց զոր իրազեկ ընթերցողը կրնայ ուղղելի: Պ. Քիւրտեան պահպանած է նաև օրինակչին ուղղագրական սխալները եւ աղաւաղեալ բառերը: Այս վերջիններէն մէկ քանին շանացինք ուղղել սիւնակներուն ներքեւ դրուած ու բուագրուած ծանօթութիւններով» («Անահիտ», էջ 34): Ըստ այսմ բնագրի «սգալ» (ձեռագրերում յաճախադէալ) բառը ծանօթագրուած է «Այսինքն՝ զգալ», «ի հոսամաց»ը՝ «Այսինքն՝ ի հոսանաց» (էջ 33), «Կողմանսկանք նոցին»ը՝ «Հաւանօրէն՝ կողմնականք նոցին», «իտեւտեւու»ն՝ «Հաւանօրէն՝ ի տեւտեւու» եւ այլն («Անահիտ», էջ 33): Նոր հրատարակութեան մէջ նշուած բառերը գրուած են՝ «զգալ», ի հոսա-

⁹ ԵԶՆԻԿ ԿՈՂԲԱՑԻ, [Ճառք ընդդէմ աղանդոց], Աշխատակիրութեամբ Մարտիրոս Միհնականի, Առաջին հատոր, Ներածութիւն եւ քննական բնագիր, Մրրագրուած եւ միակ վաերական հրատարակութիւն, առանց այլընթերցումների, 222 էջ, Երկրորդ հատոր, Մանօթագրութիւններ եւ համարդրան, 642 էջ, Ժնէ, 1992:

¹⁰ Միջնադարեան ձեռագրերի կէտադրութեան մասին տե՛ս ԺԵ. Ա., էջ ԿԴ:

նաց, կողմնականք նորին, ի տեսետեռու» եւ այլն։ Նախ նկատենք, որ «նոցին»ի փոխարէն դրուած՝ մեր ընդդած «նորին»ը լիովին սխալ եւ անհիմն է (դիմացի՝ 99րդ էջում սա թարգմանուած է՝ «նրանց»), ապա՝ այսպէս հրատարակելն արդէն խոտելի եղանակ է, որովհետեւ ընթերցողը ո՞չ ձեռագրական բառերը կարդալու եւ համարելու է ձեռագրական ձեւեր, մինչդեռ մի ձեռագրով արուող հրատարակութիւնների մէջ ընդունուած է հետեւեալ եղանակը. շարադրանքի մէջ գրում են «կողմնականք», տողատակին՝ «ձեռագրում՝ կողմանսկանք»։ Եւ այսպէս շարունակ։

Դառնանք Մէծոփեցուն վերագրուած բնագրին. նրա հեղինակութիւնն է համարուել «Բնագիր Ժ.»ն, որ «Բերուած է ըստ ՄՄ, ձեռ. 599, էջ 44ր-45ա» (ԱԱ, էջ 134) եւ ունի «Չորս են հայրական սկրիպտ, որ անուանեցան համարք» սկսուածքը, իսկ տպուած աւարտն է. «Առաջին ձայն՝ Փառք ի բարձունս (եւ այլն)... Հմորիոն Արմերոյ, Արիստիկէս եւ Փռոդէս. այս Գ. վարդապէտու կազմեց|46ա|ին զմէկնութիւն ձայնից», եւ «Եղակի մի գրուածք է, որտեղ ուշագրաւ փորձ է արուած համարելու եկեղեցական ձայնեղանակների եւ աւետարանների խորանների նկարագրման համար կիրառուող գոյների յատկութիւնները...» (ԱԱ, էջ 71):

Մի յղման մէջ Հ^{մր} 599ի մասին համառօտ ձեռագրացուցակից քաղուած է՝ «ԺԵ. դ. (1413ից առաջ), գրիչ՝ Թովմա Մէծոփեցի» (ԱԱ, էջ 72)¹¹, իսկ «Մատենագրութիւն» (պէտք է լինէր «Մատենագիտութիւն») ցանկում կայ. «599, Փողովածու, ԺԵ. դ. (1413ից առաջ), գրիչ՝ Թովմա Մէծոփեցի» (ԱԱ, էջ 180): Ճըշմարտութիւնը պարզելու համար նախ բերենք ձեռագրիս վաղուց ի վեր տպագրուած յիշատակարանը.

61ա «Զմետնեալս յամենայն շնորհաց եւ զծոյլս յամենայն կրաւնաւորաց, զբագմագէր ոգիս՝ զպիտականուն վարդապէտու Թ[ովմա] աղաչեմ յիշել ի Տէր, որ բազում աշխատութեամբ հաւաքեցի զայս գիրքս, որ ցրուեալ եւ ցընդեալ էր ի վաղուց հետէ, եւ ոչ ոք գիտէր, թէ զի՞նչ էր սա: Այլ եւ զհոգեւոր եւ զմարմնաւոր ծնաւղքն մեր, մանաւանդ զՄաքէնս բահանայ յի-

¹¹ Նկատենք՝ վերջին 2 բառը ձեռագրի 46ա էջում են. ան' մեր Բնագիր Ա. 26:

¹² Տե՛ս Ցուցակ ձեռագրաց Մաշտոցի անուան Մատենագրարանի, Հա. Ա. Կազմեցին Օ. Եղանեան, Ա. Զէյթունեան, Փ. Անթարեան. Ներածութիւնը՝ Օ. Եղանեանի, Խմբագրութեամբ՝ Լ. Խաչիկեանի, Ա. Մնացականեանի. Երևան, 1965, էջ 359.

շեսչիք ի բարին Քրիստոս, եւ կաթ մի յարտասուաց ձերոց ցաւղեսցի ի թարախալից մեռեալ հոգիս եւ մարմինս մեր, եւ Քրիստոս Աստուած զիշողքոյ լիշէ ի փառս իւր. ամէն: ՊԿԲ. (1413) գրեցաւ»¹³:

Այստեղ «վարդապետու» բառը ծանօթագրուած է. «Այս տողի շարունակութեամբ, լուսանցքի վրայ, գրուած է եղել ինչ որ անուն, որից պահպանուել են միայն «Թ» եւ «Ա» տառերը, վերից վար դասաւորութեամբ: Հնարաւոր է ենթագրել, որ այստեղ գրուած է եղել գրչի անունը՝ «Թովմայ»¹⁴, ըստ այսմ եւ յիշատակարանի գրիչ համարուել է «Թովմայ», գրչութեան վայրը՝ «Խլաթայ վանք». աւելի նորերս Արտաշէս Մաթեւոսեանը լիովին համոզիչ փաստարկներով ապացուցել է, որ այս թովման իսկապէս Մեծոփեցին է, եւ որ այս՝ Հ^Յ 599 ժողովածուն (Եօթնագրեանք) եւ Առմաշի Հ^Յ 212^ր Տաթեւացու Քարոզգրքի օրինակը 1413 թ. նա գրել է Խլաթի առափնեայ Աղեթ գիւղի («Աղթայ») վանքում¹⁵: Այժմ կայ նաև 599 ձեռագրի ընդարձակ նկարագրութիւնը, ուր գրչութեան թուականը սխալմամբ համարուած է 1413ը, իսկ յիշատակարանի գրչի անունը մնացել է անյայտ, այլև՝ վերն ընդգծուած տողը չկայ¹⁶:

Զեռագիրն ուշադիր քննելուց յետոյ համոզուեցինք, որ Մեծոփեցին 61ա էջի յիշատակարանից բացի գրել՝ ընդօրինակել է ձեռագրիս միայն 61ր-2ա էջերի¹⁷ մանր բնագիրները¹⁸ եւ այդ

¹³ ԺԵ. դարի Հայերէն ձեռագրերի յիշատակարաններ, Մասն Ա. (1401-1450 թթ.), Կազմեց Լ. Ս. Խաչիկեան, Երեւան, 1955, Հ^Յ 152, էջ 147 (այսուհետեւ՝ ԺԵ. Ա.):

¹⁴ Նոյն տեղում, ծ.:

¹⁵ Ա. Մաթեւոսեան, Մեծոփավանքի գրչութեան կենտրոնը (ԺԵ-ԺԵ. գգ.), Մայր Աթոռ Ս. Էջմիածին, 1997, էջ 75-6:

¹⁶ Մայր ցուցակ Հայերէն ձեռագրաց Մաշտոցի անուան Մատենադարանի, Հու. Բ., Կազմեցին՝ Օ. Եղանեան, Ա. Զէյթունեան, Փ. Անթարեան, Ա. Քէօշկերեան, Խմբագրութեամբ՝ Ա. Մնացականեանի, Օ. Եղանեանի, Ա. Զէյթունեանի. Յանկերը Վ. Դեւրիկանի, Երեւան, «Նախրի», 2004, էջ 1463-8 (այսուհետեւ՝ Մայր ցուցակ): Այս հատորի բազմաթիւ այսպիսի թերութիւնների հիմնական պատճառն այն է, որ տպագրուեց իր նախորդ՝ Ա. Հատորից 20 տարի յետոյ, փոխուեցին մի քանի պատասխանատուններ, արդիճնում գիրքը տպագրուեց առանց հիմնական հոգսակիրի:

¹⁷ Թէեւ առաջին Հայեացքից 61ր-2ա էջերի գրչութիւնը տարբեր է թւում Մեծոփեցու յիշատակարանի գրից, սակայն այս տպաւորութիւնն առաջանում է տառերի չափից. յիշատակարանի գրերն աւելի խոշոր են, որովհե-

հաստատել իր երկրորդ յիշատակագրութեամբ. 62ա «Աղաչեմ անպարսաւ [թողուլ զիս]. պայմ ամենայն ի հին գիրս գտի, ի Խլաթայ վանսն»¹⁹. այստեղ «թողուլ զիս» բառերը Մեծոփեցին չի գրել միայն մոռացմամբ (Լ. Խաչիկեանը լրացրել է իմաստն ամբողջացնելու համար), իսկ համառօտագրուած «ամենայն» բառը գուցէ հէնց ինքը՝ Մեծոփեցին փորձել է ջնջել (բայց յստակ ընթեռնելի է), դրանով իսկ ցոյց տարով, որ խօսքը ամբողջ ձեռագրին (Նախորդող՝ մեզ հասած 61 թերթին) չի վերաբերում, այլ միայն 61ր-2ա էջերի պարունակածին: Միով բանիւ, Մեծոփեցու գրած 61ա-2ա՝ երեք էջի գիրը գործնական՝ առտնին բոլորդիր է՝ ի տարբերութիւն մնացեալ թերթերի կամ բուն ձեռագրի կանոնաւոր՝ հոծ տառապծերով բոլորգրի:

Վկայակոչուած Մայր ցուցակում ձեռագրիս պրակահաշիւր ներկայացուած է այսպէս. «ՊՐԱԿ՝ Ա-ԻԴԽ12 (Ա-ԺԴ, ի չիք, ԺՀ, իթ 10, իԱ 4)»²⁰, մինչեւ ձեռագրի մէջ յստակ նկատելի են նաև հին պրակահամարներ, ըստ այսմ ներկայացնելու նախընտրելի ձեւն այս է. ՊՐԱԿ՝ ԺԵ-ԺԹ՝ [սկզբնապէս՝ ԺԱ-ԺԶ] չ 12 (ԺԼ 10) + ԻԱ-ԻԴ [սկզբնապէս՝ Ա-Գ] չ 12 (իԱ 4, իթ 10): Պատկերնք մի այլ ձեւով եւս, թեք գծից առաջ գնելով նոր, յետոյ՝ հին պրակահամարները. ԺԵ/ԺԱ¹⁻¹², ԺԶ/ԺԲ¹³⁻²⁴, ԺԷ/ԺԳ²⁵⁻³⁶, ԺԼ/ԺԴ³⁷⁻⁴⁶, ԺԹ/ԺԵ⁴⁷⁻⁵⁸, իԱ/ԺՁ⁵⁹⁻⁶², իԲ/ԱՅ⁶³⁻⁷², իԳ/Բ⁷³⁻⁸⁴, իԴ/Գ⁸⁵⁻⁹⁶:

Ըստ այսմ վատահ ենք, որ պէտք է բառացի հասկանալ Մեծոփեցու յիշատակարանի հետեւեալ տողը. «բազում աշխատութեամբ հաւաքնցի զայս գիրքս, որ ցրուեալ եւ ցընիեալ էր ի վաղուց հետեւ, եւ ոչ ոք գիտէր, թե զի՞նչ էր սա». ուրեմն՝

տեւ գրելու տեղն աւելի մեծ է եղել, իսկ յաջորդ էջերում տառերը համեմատարա փոքր են, որովհեաւ պէտք է եղել տեղաւորել ծաւալը որոշակիորեն յայտնի երեք մանր բնագիր: Այսինքն՝ Մեծոփեցուց առաջ ներկայ 61ա էջը գրաւած է եղել կիսով, 61ր-2ր էջերը՝ լիովին չգրուած. կիսառ է-ջում Մեծոփեցին գրել է իր յիշատակարանը, իսկ 61ր-2ա էջերին՝ երեք փոքր բնագիր. 62ր էջը այժմ եւս պարապ է՝ չգրուած:

¹⁸ 61ր «Յաղագս խոստովանահարանց - Խոստովանահարանցն Ե. իրս պիտոյ է...», «Յաղագս խոստովանորդաց - Խոստովանորդեացն նոյնապէս Ե. իրս գիտելի է...», 61ր-2ա «Զգործմն զոր եւ գործեմ, եւ նա գործէ, եւ մեծամեծ եւս քան զոյնս գործեսցէ. Ա՝ սէրն, Բ՝ ողորմութիւնն, Գ՝ մկրտելն [62ա] Գ՝ պատղապն... եւ ոչ ունէին ամենայն ազգն հրէից»:

¹⁹ ԺԵ. Ա. Հ.^ր 152ր, էջ 147:

²⁰ Մայր ցուցակ, Բ., էջ 1463:

Մեծոփեցին Խլաթի Աղթայ վանքում գտել է մի ձեռագրի ԺԱ-ԺԶ եւ մի այլ ձեռագի Ա-Գ պրակները (Երկուսն էլ եղել են համարեա նոյն չափի, սակայն առաջինի էլեբում տողաքանակը 18, 17 եւ 21 է, իսկ երկրորդինը, թ. 63-96 23 կամ 22), հետագայում պատրաստել է տուել եւ իր գտածի սկզբում գրել 14 (Ա-ԺԴ) պրակ եւ ամբողջը վերստին համարակալել տուել՝ Ա-ԻԴ։ Ձեռագրի հետագայ վերակազմման²¹ ժամանակ, նկատի ունենալով գուցէ գրչութեան տարբերութիւնը, սկզբի յաւելեալ Ա-ԺԴ պրակներն առանձնացրել են եւ, կրկին՝ գուցէ, առանձին կազմել, դրանից առաջ կամ էլ նոյն վերակազմութեան ժամանակ կորսուել է նաև նոր համարակալման ի՛ 20րդ պրակը։

Այս ամէնն աներկրայ է գարձնում, որ Մեծոփեցին ինքը չի գրել այս ձեռագիրը (օրինակել է միայն 61ր-2ա էջերի մանր ընագրերը), այլ, իր իսկ բառով՝ հաւաքել է իրենից գուցէ առնուազն 50 տարի առաջ գրուած եւ «ի վաղուց հետէ» անխնամ պահուած լինելու պատճառով վնասուած երկու տարբեր ձեռագրերի մնացորդները եւ լրացնել ու կազմել է տուել։ Միով բանիւ, Հ^մ 599 ձեռագիրը մենք թուագրում ենք ԺԴ. դ. կէսերով եւ վստահօրէն եղրակացնում, որ նրա մէջ առկայ ձայնաբանական բնագիրը (42ա-6ը) իր ամբողջութեան մէջ՝ աղբիւրագիտօրէն տարբեր ծագում ունեցող բոլոր մասերով հանդերձ, Մեծոփեցու հեղինակութիւնը չէ. այս մատենագիրը եղել է միայն այդ բնագիրը պարունակող ձեռագիրը ոչնչացումից փրկողը։

Ամփոփենք. ձեռագիրս անշայտ տեղում գրուել է ԺԴ. դ. կէսերին, 1413 թ. վնասուած վիճակում գտնուել է Խլաթի Աղթայ վանքում, որտեղից Մեծոփեցու ձեռքով «հաւաքուել» եւ տարուել է Մեծոփայ վանք, ուր 1440ի շուրջ նոյն թովման նրա պարունակած նիւթերը տարբեր եղանակներով²² հմտօրէն օգտագործելով՝ կազմել է դասագրքային՝ Հ^մ 7117 ձեռագրի շատ միաւորներ։

Այս ճշգրտումից յետոյ պարտաւոր էինք ստուգելու, թէ ձեռագրում Մեծոփեցուն վերագրուած հատուածը մնացեալ շարադրանքից վերնագրային կամ տրոհման որեւէ յատկանիշով առանձնացուած է արգեօք, սակայն այսաեղ էլ արդիւնքը բացա-

²¹ Ներկայ կազմը ԺԼ. գրի է. այս վերակազմումն արուել է ձեռագիրը եղրահատելով, որի պատճառով էլ Մեծոփեցու անունը կարուել է, մնացել են թե եւ Ա տառերը։

²² Մեծոփեցու աշխատաեղանակի խնդիրը բննելու ենք այլ առիթով։

սական եղաւ՝ Հմ^ր 599ի 44ր էջում սկսուածքային, իսկ 45ր (աւելի ճիշտ՝ 46ա) էջում աւարտի նշաններ չկան, ուստի եւ անհասկանալի է մնում, թէ այդ կտորն առանձնացնելու եւ այն Մեծոփեցուն վերագրելու հիմքը ո՞րն է եղել:

Այնուհետև Հմ^ր 599 ձեռագրում առկայ բնագիրը համեմատեցինք Ա. Արեւշատեանի հրատարակած կտորների հետ եւ համոզուեցինք, որ վերջիններիս մէջ վրիպումները բաւական շատ են. սրանց մի մասը բխում է պատրաստման բնագրագիտական սկզբունքի չգոյութիւնից, մի մասը՝ ուղղագրութեանն անհմուտ լինելուց, մի մասն էլ մեքենագրական-շարուածքային վրիպակներ են (անմասն Ա. բնագրիս տողատակերը). Այս կացութեան թելագրանքով էլ պատրաստեցինք Մեծոփիավանքում կենցաղավարածքնագրի նոր՝ ամբողջական հրատարակութիւնը, նախորդ տպագրի տարբերութիւնները տողատակում նշելով Տ պայմանանիշով:

* * *

Այժմ համառօտ անդրագառնանք Քիւրտեան հաւաքածոյի Հմ^ր 225 ձեռագրին, որ գիտութեանը յայտնի է միայն այն չափով, որչափով ինքն իսկ Քիւրտեանը ժամանակին ներկայացրել²³ եւ սրբագրել է Ն. Գ. Ակինենանի մի ուսումնասիրութեան²⁴ որոշ կարեւոր կիտեր: Բազմաթիւ արժեքաւոր բնագրեր եւ բազմազան արժանիքներ ունեցող ձեռագիրս ունի գրչութեան ժամանակի 27 յիշատակարան (Յը՝ բաւական ընդարձակ): մանրամասների մէջ ըրմաններով, ներկայացնենք մեր պարզածը. Յովհաննէս Գ. Բարիձորեցին ձեռագրի սկիզբը, երեւի 1596 թ., գրել է Խիզանի Բարիձոր գոր գիւղի Սուրբ Աստուածածնին վանքում²⁵, երկրորդ մասը

²³ Յ. Քիւրտեան, Հայրապետ Վարդապետ Ղուլիկցի և Ներսէս Նախկնապահ Բաղիշեցի (Աննագրական Եշուումներ և յաւելումներ).- Բազմաթիզպ, 1955/Դ-Ե, էջ 100-8. այսուեւ հրատարակել է ձեռագրի 269ա-73ա էջերի յիշատակարանները, քաղուածքներ արել՝ 116ա, 188ր էջերի յիշատակագրութիւններից. այսուղից արտասպառել է Հայերէն ձեռագրերի ժիշտուածքները (1621-1640 թթ.), հա. Բ., Կազմեցին Վազգէն Յակոբին, Աշուածուածքներ, Երեւան, 1978, Հմ^ր 65, էջ 40-4:

²⁴ Հմժմ. Բաղէշի դպրոցը. 1500-1704. Նպաստ մը հայոց նկնդեւոյ պատմութեան և մատենագրութեան, Գրեց Հ. ՆերՍէՍ Վ. ԱկիննէԱն, Վիեննա, 1952, էջ 166-202:

²⁵ Բարիձորի կամ Բարակաձորի Մ. Աստուածածին վանքի մասին անմասն ՏՐԴԱՏ ԵՊՒՄԿՈՊՈՍ ՊԱԼԵՆԱՆ, Հայ վանորայք, Մ. Էջմիածին, 2008, էջ 269 եւ

(թ. 197-268), կրկին երեւի՝ 1597 թ., գրել է Լվովում, այնտեղից վերադարձել եւ նորոգել է Խիզանի Ս. Խաչ եւ Բարիձորի Ս. Աստուածածին վանքերը, մահացել հաւանաբար 1609 թ.: Անաւարտ եւ անկազմ մնացած ձեռագիրը նրա եղբօրից, ըստ երեւոյթին 1620 թ., գնել է իր աշակերտ Հայրապետ վ. Ղուլթիկեցին, յանձնել Սահակ քհ. Բաղիշեցուն²⁶, որն այն ծաղկել եւ կազմել է 1621 թ.²⁷:

Մեր ներկայ իննդրի համար կարեւորն այն է, որ այս ձեռագրի պարունակած նիւթերի գգալի մասն արտածուած է 7117ից, վերարտադրուած են նաեւ վերջինիս որոշ յիշատակարաններ:²⁸ Սա հաստատում է նաեւ գրիչ Յովհաննէս վ. Բարիձորցիի մի վկայութեամբ. «Յիշեսչիք ի բարին Քրիստոս գԴաւիթ-վարդապետն, որ զայս Բառդիքս ի սուրբ ուխտէն Մեծոփայ երեր եւ շնորհեաց մեզ աւրինակ ձրի, զի այս նման ոչ գոյ ի նահանգիս մերում, զի նախագաղափար սորա ի Կաֆայ քաղաքիցն²⁹ բերեալ էր» (188ա): Սակայն ձեռագրիս մէջ կայ նաեւ 7117ի չունեցած մի քանի բնագիր. արդէն հաստատել ենք վերջիններից մէկի եւ Հ^մ 599ում առկայ մէկի հարազատութիւ-

383. Վասպուրական-Վանի վանքերը, Գ. մաս, Գրեց Դոկտ. Հ. ՀԱՄԱԶԱՍՊՈՍԿԵԱՆ, Վիճակ, 1947, էջ 839-43, թ. Խ. ՅԱԿՈԲԵԱՆ, Ս. ՏԵԼԻՒՔ-ԲԱԽՇԵԱՆ, Յ. Խ. ԲԱՐՄԵՂԵԱՆ, Հայաստանի եւ յարակից շրջանների տեղանունների բառարան, Հա. Ա., Երեւան, 1986, էջ 617:

26 Այս ծաղկողի եւ նրա ձեռագրերի մասին տե՛ս ԱՍԴՂԻԿ ԳԵՂԻՐԴԵԱՆ, Հայ մանրանկարիչներ. մատենագիտութիւն, Թ-ժԹ. դդ., Գահիրէ, 1998, էջ 629-31:

27 Ձեռագրիս գրչութեան հանգամանքների մեր հատազոտութիւնը հրատարակերու ենք այլ առիթով, մինչ այդ ասենք, որ վերն ասուածի Հիմքը նոյն ձեռագրի յիշատակարաններն են, Քիւրտեանի նշուած յօդուածը (Բագրավիպ, 1955/Դ-Ե., էջ 100-8) եւ Հայերէն ձեռագրերի ժէ. դարի յիշատակարաններ (1601-1620 թ-ը.), Հա. Ա., Կազմեցին ՎԱԶԳԻՆ ՅԱԿՈԲԵԱՆ, ԱՇՈՏ ՅՈՎՃԱՆՆԻՍԻՍԵԱՆ, Երեւան, 1974, էջ 44:

28 Հմմտ. 7117, 115թ, 127թ եւ Ք.225, 144թ, 165ա:

29 Սա ուղղակի արձագանքն է Թովմա Մեծովեցու՝ 7117 ձեռագրի վերջին 479թ էլում առկայ յիշատակարանի, ուր կարդում ենք. «Յիշեսչիք ի բարին Քրիստոս գիտեաւորն զիրակոսն՝ կենդանարապ գերեզմանին Գրիգորի Լուսաւորչին Վիրապայ, որ երեր զգիր զայս ի Հայս ի Կափա քաղաքէն». տե՛ս ԺԵ. Ա. Հ^մ 672ա, էջ 597. տեղեկութեանս մեկնաբանութիւնը տե՛ս Լ. ԽԱԶԻԿԵԱՆ, Աշխատութիւններ, Գ. էջ 668-72:

նը՝³⁰, ուստի եւ չենք բացառում, որ Ք.225ը կարող է օրինակուած լինել ո՛չ թէ ուղղակի 7117ից, այլ՝ նրանից եւ որոշ չափով այլ ձեռագր(եր)ից Մեծոփայ վանքում արուած միջանկեալ մի՛ այլ ընդօրինակութիւնից (վերոբերեալ քաղուածքում խօսքը մի՛՝ «Ճրի աւրինակ»ի մասին է): Ըստ այսմ մտածում ենք, որ 7117ում միայն մասամբ (27-38 նախադաս.) առկայ, մնացեալ ամբողջութեամբ նրա մէջ գոյութիւն չունեցող Ք.225ի 124բ-6ա էջերի ձայնաբանական բնագիրը եւս Բարիճոր է տարուել Մեծոփայ վանքից, այս տրամարանութեամբ էլ այստեղ հրատարակոււմ ենք նաև այդ բնագիրը, որով միաժամանակ իրականացնում ենք Քիւրտեանի ցանկութիւնը՝ իր ձեռագրաց ցուցակում³¹ այս բնագրի մասին նա դրել է. «կ'արժէ հրատարակել»:

Գալով ընդհանրապէս որեւէ ասպարէզի (նաև՝ ձայնաբանութեանը) վերաբերող հատակոտոր ընագրերի հրատարակման եւ քննութեան խնդրին՝ եւ, դատելով ըստ Ա. Աբեւչատեանի տը-

³⁰ Ք.225. 158-63թ և ՄՄ Հ^մ 599. 47ա-51թ էլեկրի ընապիրը նոյնն է. «Քնիքական կոչի է.ազդեակմ՝ զուգեալ ի Դարձէ փիլիսոփայէ և ի Հռումա վարդապետ՝ կոչեցեալ անուն Փիլինիկ»: Համոզուած ենք, որ աստիճանաբար պարզելու ենք նաև միւնքների հիմք օրինակ(ներ)ը:

³¹ Միկթարեան միաբանութեան հետ պայմանաւորուածութեան համաձայն՝ այս ձեռագրացուցակը խմբագրում, լրացնում եւ հրատարակութեան ենք պատրաստում:

Ա. Արեւատեսնի 189 էջանց գրքի 20 էջը «Քննական» բնագրերն են, 24՝ նրանց աշխարհաբար տարրերակները (անց' էջ 90-137 48 էջ, որից 4ը բաց է): Գրքի վերանագիրը ենթադրել է տալիս, որ այստեղ պէտք է գործածուած լինի զանէ Մաշտոցեան Մատէնագարանի բոլոր ձեռագրերի նիւթը: Հետագառական մասի եւ բնագրերի լրումների, նաև «Մատէնագրութեան» թուարկման համաձայն օգտագործուած են ՀՀ 55, 468, 599, 750, 1770, 1903, 2329, 2752, 2939, 3276, 5611, 6031, 6616, 7117, 7362 ձեռագրերը: Նոյն Մատէնագարանի երկասոր համառօտ ձեռագրացուցակի (Երեւան, 1965, 1970) ստարկայական ցանկերում նշուած են նաև հետեւեալները: Անուանք ձայնից - 8307, 8606. Յաղագս ձայնից - 594, 1964, 3050, 6686. Խրաս ձայնի սրանալոյ - 9271: Լրութեան համար նշենք նաև ինչ որ կերպ առընչուող՝ Հինգ ձայն Պորփիրի - 9789. Զայնագիւտ - 6522, 8444, 8506, 8611. Յաղագս երաժշտական գործեաց - 6686. Յաղագս երաժշտութեան - 5138. Անուանք խաղից - 605, 5663, 6143, 6985, 7040, 8404, 8575: Աւելացնենք, որ մեր ձեռագրացուցակներից շատերի (Երուսաղէմի, Վենետիկի, Վիեննայի) կազմագները նոյն ցուցակներում արդէն հրատարակել են այսպիսի մանր բնագրերը. այսինքն՝ ցանկութեան դէկտում բնագրական նիւթի սահմանները հնարաւոր է աւելի ընդլայնել:

պագրած կտորների, տեսնում ենք, որ նրանք մշտական փոխազդեցութիւններ են ունեցել³³, ուստի եւ վստահ ենք, որ սրանք արժէ Հարատարակել նախ ձեռագրական նիւթի ճշգրիտ վերարտադրմամբ, ապա՝ տարբերակները հետազոտել սիւնակներով զուգագրելով՝ համապրելով եւ, ի վերջոյ, ի պահանջել հարկին պատրաստել միասնական «քննական» բնագրեր, որոնք որեւէ առանձին ձեռագրով վկայուած չեն, այլ կերպ ասելով՝ բնութեան մէջ գոյութիւն չունեն³⁴:

Հմ^ր 599ի մեր Ա. բնագրի 28-37 մասը 7117ում (149ա-50ա) առկայ միակ ձայնաբանական բնագրին է³⁵, որ կայ նաեւ Ք.225ի ունեցած Բ. բնագրի 26-27րդ նախադասութիւնների միջեւ (Ք.225. 125բ-ճա). ըստ որում վերջին երկուսում հատուածս ունի նաեւ յատուկ խորագիր՝ «Մեկնութիւն ձայնից՝ արարեալ սուրբ վարդապետացն» (599ը սրա իմաստն ունի որպէս շարադրանքի մաս): Նկատի ունենալով որ 599 ձեռագրը ժամանակագրօրէն հնագոյնն է, Ա. բնագրի նրա այս հատուածը հիմք ենք դարձրել իսկ միւսների (Բ՝ 7117, Գ՝ Ք.225) տարբերութիւնները նշել ենք որպէս ընթերցումներ (այսինքն՝ այս կտորի քննութիւն չենք արել), իսկ շարադրանքի մէջ պայմանականօրէն դրել ենք նրանց միայն խորագիրը, որով նպատակ ենք ունեցել սոսկ շեշտելու այդ մասի գոյութիւնը նաեւ միւս երկուսում: Հմ^ր 599ը ունի հետագայ՝ ԺԼ. դ. սրբագրումներ, որ տողատակում նըշել ենք Ա՛ պայմանանիշով:

Հիմնուելով առաջին հերթին ձեռագրերում առկայ տրոհման նշանների վրայ, բնագրերի թելադրած տրամաբանութեամբ կէտադրութիւնը նշանակել ենք ըստ ներկայիս կանոնների. ուղղագրական շեղումներն ընդգծել ենք: Նոտրգրով նշել ենք սուրբգրական քաղուածքների հասցները, իսիստ անհրաժեշտ դէպ-

³³ Օրինակ՝ ԱԱ, էջ 90, Բնագրի Ա՝ 4 առող է. «Առաջինն ի հիւնականէ... Տասներորդն ի հաւուց» եւ համապատասխանում է ստորեւ Հարատարակուող Բ. բնագրի 32րդ հատուածի վերջին տողերին (Ք.225. 126ա):

³⁴ Խնդրոյ առարկայ գրքում Հրատարակուած բնագրերն ինչ որ չափով այդպիսին են, օրինակ՝ ԱԱ, էջ 90, Բնագրի Ա՝ գործածուած է նաեւ Վանական վարդապետի Զարգմունքը (Ճեռ. Հմ^ր 5611. 71ա), բայց «քննական» բնագրի «Չորրորդն՝ յալբերաց»ի համեմատ 5611ի «Դ՝ յաղաւրէաց է» էական տարբերութիւնն արձանագրուած չէ:

³⁵ Ցիշենք, որ էականօրէն տարբեր խմբագրութիւնն է ԱԱի Բնագրի Ե.ի (ԱԱ, էջ 116)

քերում՝ ծանօթազրել մէկ-երկու բառ (յունարէն երաժշտական եղբերի բացատրումը մէր խնդրից դուրս ենք համարել), թուատառերի (Ժ.) մօտ վերջանութիւն (10) դնելն աւելորդ ենք դիտել:

Հնիթերցումները նշանակել ենք աւանդական եղանակով, միայն «փոխարէն» նշանակող վիշ-ի տեղ զրել ենք], չիք-ի տեղ՝ >, շարահիւսական գրափոխութիւններից առաջ՝ ~ պայմանական նշանները. բոլոր դէպքերում նախ գրուած են համեմատուող օրինակների պայմանանիշերը (Ա, Ա՛, Բ, Գ, Տ), ապա՝ ընթերցումները, յիշեալ նշաններից մէկը, վերջում՝ հիմնաբառերը:

Համեմատութեան պայմանանիշերը հայերէնի գլխատառերով նշանակած լինելով, ընկալման շփոթ չառաջացնելու նպատակով, տարրնթերցումների մէջ մեծասառ չենք գործածել, թուատառերը (ասենք՝ Դ՝ 4) տողատակում երկու կողմից առնուած են կէտերի մէջ՝ «դ.»³⁶:

ԲՆԱԳԻԲ Ա.

ՅԱՂԱԳՍ ԶԱՅՆԻՑ ԹՒ ՈՒՍՏԻ³⁷

ԱՌ Հ^{ար} 599, 42ա-6ր. Տ էջ 94 (1-11՝ «տավղեաւք երգէին») և
134 (18-26)

1 Ա.³⁸ Երանելոյն Բարսղի³⁹ յաղազս ձայնից՝ թէ ուստի են⁴⁰ եւ կամ յումմէ գտան, զոր թաքմաննեաց՝ Ստեփաննոս փիփոփա⁴¹, զի նա եղեւ երաժիշտ եւ հմուտ ամենայն⁴² ձայնից կենդանիաց⁴³, եւ բաժաննեաց զձայնս ի մասունս իԴ., որ են այսու-

³⁶ Որոշ փոքր տարրերութիւններով նոյն եղանակը տե՛ս նաեւ մեր՝ թովմա Մեծոփեցու՝ երգասաց Յովհաննէս Խոյեցի-Խլաթեցու վկայարանութիւնը (ուսումնաիրութիւն եւ բնագրեր). - «Էջմիածին», 2008/Բ., էջ 67-103.

³⁷ Տ ուսաի + զտաւ.

³⁸ Տ > ա.՝ թ. (համարը 1-8ի)

³⁹ Տ բարսկի

⁴⁰ ԱՌ իցեն | են

⁴¹ Տ թարգմաննեաց

⁴² Տ փիլիսոփայ

⁴³ ԱՌ > ամենայն

⁴⁴ ԱՌ ամենայն կենդանիաց

քիկ⁴⁵. բառաչե՛լ, բչե՛լ, գոնչե՛լ⁴⁶, գոչե՛լ, բնչե՛լ, մնչե՛լ, բրչե՛լ⁴⁷, կառանչե՛լ, մռմռե՛լ, ճչե՛լ⁴⁸, կանչե՛լ, գոհգոհա՛լ, վչե՛լ, խանչե՛լ⁴⁹, հառաչ|42թ|ե՛լ, կառանցե՛լ⁵⁰, կաղկընձե՛լ, հաջե՛լ, կականչե՛լ⁵¹, զոկե՛լ, որ է կարկաջե՛լ, սողա՛լ, սըրովինջա՛լ⁵², մնջնջե՛լ, ճոճուե՛լ⁵³, սայ առնու ի ձայնից եւ գործէ զուգաթիւս առ ամենայն ձայնաւոր⁵⁴, մի առ մի երգեն, սոքաւք⁵⁵ ձայն արարեալ:

2 β. Արդ, յետ⁵⁶ սորա Սարդիանոս թէզրացի⁵⁷, լեալ երաժիշտ ըստ արուեստաւոր գործարանի, զամենայն հաւաքեալ⁵⁸ զձայնսն ի մի աղի, եւ զմի մի ձայն ի բաց բաժանեաց՝ մինչեւ ի քարանցն անգամ, զադալ զուրախ⁵⁹ տաղմունսն⁶⁰ ձայնից ամենայն կենդանեաց:

3 Գ. Յետ⁶¹ սորա Զեղէոս⁶², երաժիշտ լեալ, ալլակերպ ի սոցանէ յարմարեաց⁶³ նուազս. եւ հարկանէր նովաւ զամենայն ձայնս կենդանեաց:

4 Դ. Ապա Սենեգէոս⁶⁴, երգիչ լեալ եւ ուսեալ⁶⁵ զնոցայն, եւ ի հիւսնակոփ⁶⁶ |43ա| փայտէն⁶⁷ հնչման գտեալ⁶⁸ զԱռաջին ձայնն:

⁴⁵ Տ ալսորիկ

⁴⁶ Տ կռնչել

⁴⁷ Տ գոհգոհել վճչել անչել

⁴⁸ Տ կառայնել

⁴⁹ Տ կանկանջել

⁵⁰ Տ սորվինջալ

⁵¹ Տ ձայնս, որ] ձայնաւոր

⁵² Տ սոքոք

⁵³ Տ հետ

⁵⁴ Տ թէզրացի

⁵⁵ Տ հավաքեալ

⁵⁶ Ա սկզբնակս զրկլ է՛ զիւրախ

⁵⁷ Տ զգալ զիւրգիստաղմունս] զադալ զուրախ տաղմունսն

⁵⁸ Տ եւ հետ] յետ

⁵⁹ Տ զեղեսս

⁶⁰ Տ հաշմարեաց] յարմարեաց

⁶¹ Տ սենեգէս

⁶² Տ եւ եւսեալ] եւ ուսեալ

⁶³ Տ հիւսնակոփ

5 Եւ ապա Փլեղեգէս⁶⁶ եղբայրն նորա՝ երաժիշտ, եղիտ զգեստոնն⁶⁷, որ⁶⁸ է Երկրորդ ձայն՝ ի դարբնէ եւ յերկաթոյ կռելոց⁶⁹:

6 Զ. Եւ ապա Սոփեկլէս՝ եղբայրն սոցին, եղիտ զերաժ[շոյ]աւկան⁷⁰ տառիտոնն, որ է Երբորդ ձայն՝ աւրինակեալ ի գետոց խաղացմանցն եւ ի յարձանաց հոսմանց:

7 Է. Եւ ապա Պիպանոս քեռորդին նոցին, լեալ երգիչ, եղիտ զուսուստոսն⁷², որ է Զորբորդ ձայնն՝ ի հոսմանէ ծովալին ալեաց:

8 Ը. Բայց⁷³ Արքելէս⁷⁴ երաժիշտ եղիտ զամենայն ի մաքրութիւն որոշաբար⁷⁵ ըստ աստիճանաց⁷⁶, ի յիննէն⁷⁷, քանզի ամեն զնմանէն⁷⁸ ո՞չ միայն է⁷⁹ վարժեալ, վասն որոյ կողպատեալ⁸¹ զլամելիսն եւ խցեալ⁸², զի մի՛ լուիցէ այլ զքաղցրութիւն ձայնիցն⁸³, |43թ| եւ ի թէոփեան⁸⁵ եղանիլ գործեաց երաժշտականաց, զոր ի ձայնից աստեղաց ուսան առաջինքն:

64 Տ փայտեն

65 Տ > զտեալ

66 Տ փլեղեգէս

67 Տ զգեստոն

68 Տ ըր] որ

69 Տ յերկաթէ կռելոց

70 Տ զերաժշտական

71 Տ յորդանաց

72 Տ զուսուստոսն

73 Տ > բայց

74 Տ արգելէս

75 Տ արաժաբար

76 Տ աշտիճանից

77 Տ յինէն

78 Տ զնմանէ

79 Տ > է

80 Տ վարժեալ

81 Տ կողպատեալ (ձ-ում՝ «կողպատեալ», գուցէ աւելի նիշու և՝ «կողպատեալ»)

82 Տ է խցել] եւ խցեալ

83 Տ լուիցէն զայլ քաղցրութիւն ձայնից

84 Տ ու] եւ ի

9 Եւ ապայ Դաւիթ թագաւոր եւ մարդարէ եւ երգող աստուածաին երգոյն:

10 Եւ արդ, ամենայնից դասս⁸⁶ եւ յարմարումն ձայնից զմինն՝ Տէր եւ Աւրհնեա՝⁸⁷ զԱստուած. եւ առ այս ամենայն աւրհնեն զԱստուած⁸⁸, զոր մարդարէն ասէ. «Սաղմոս⁸⁹ ասացէ՛ք Աստուծոյն մերոյ, սաղմոս ասացէ՛ք թագաւորին մերոյ» (□ □ ②). եւ դարձեալ «Երգեցէ՛ք Տեառն, երգեցէ՛ք անուանն նորայ»⁹⁰. եւ հրամանիս այս բազումք հետեւեցին: 11 Եւ ոմանք առանց գործեաց⁹¹ երգէին, Ասափ, եւ իափ ծընծղայեաւք վերագոչէին, Զաքարիայ եւ Ովրամ, եւ Սամիաւ⁹⁵ եւ իլիաս, եւ Մովսէս եւ Իդիթոն⁹⁶ տավղեաւք երգէին,⁹⁸ Մարաթիաս եւ Բանիաս, եւ Մանիաս, եւ Աբիդու, եւ Ոզիայ եւ որդիքն Կորիսեայ քնարաւան եւ սրընդաւն երգէին, իլիաս, Եղիազար⁹⁹ փող|44ա|ովն:

12 Արդ, ասացից եւ զայս. սաղմոսարանն լիցի գործի աւրհնութեան, եւ լուեալ կայ, առանց ձայնի, երգ ասի այս՝ յորժամ առանց գործեաց¹⁰⁰ գոչէ: 13 Իսկ սաղմոսերգուն յորժամ երգարանի, եւ ապա գոչէ գործիւք. եւ արդ, պարտի մելիտոնիւն՝ նոյն ինքնիւն ձայնադրողն վարժել զամենայն երաժշտակա-

85 Ա՛ թէոփիլեան, Տ թէոփիլեան. այստեղ գուցէ քնազրի անկում կայ
86 Տ դաս

87 Ա՛ ամենայն աւրհնեաց, Տ ամենայն աւրհնեն

88 Տ > եւ առ այս ամենայն աւրհնեն զԱստուած

89 Տ խաղմոս (համակարգչի վրիպակ)

90 Տ > սատուծոյն մերոյ, սաղմոս ասացէ՛ք

91 Նման՝ Սաղմ. Ճ՛մբ. 1 «Աւրհնեցէք մանկունք զՏէր, եւ աւրհնեցէք զանուն Տեառն», Սաղմ. ՂԵ. 7-8. «մաստոցէ՛ք Տեառն զիառս եւ զապաթի, մատուցէ՛ք Տեառն զիառս անուանն նորա»:

92 Տ > եւ դարձեալ երգեցէ՛ք տեառն, երգեցէ՛ք անուանն նորայ. եւ հրամանիս այս բազումք

93 Տ եւ ձ-ում՝ գործոց

94 Տ ծնծղաւաւք

95 Տ սամիափ

96 Ա՛ իդիթոմ, Տ դիթում

97 Տ տավղիւք

98 Տ > մարաթիաս եւ բանիաս... ըստ գրոյ ընթերց[ուած] (17ի վերջ)

99 ձ-ում՝ ջնջման հևտք կայ, բայց կարծես քնազրի պակաս չկայ

100 ձ-ում՝ գործից

նութիւնն, զի գեղեցկապէս զարդարեսցէ զմելիտոնսն եւ զամենայն ձայնադրեալսն, զի յորժամ ելցէ բան ի բռեկուսէ, որ է բանաստեղծ, ի հեռետորէն, որ է ճարտասան, զարդարեսցէ զմելիտկոսն ձայնադրելով տոսպտաւ, տրոհաւ¹⁰¹ եւ եղանակաւ, քաղցրութիւնը տալզին եւ ձայնին գեղգեղմամբ:

14 Արդ, մանկանց եկեղեցոյ ո՞չ վայել է գործարան՝ որպէս ի հնումն, այլ կոկորդն փոխանակ սրբնգի, փողսն՝ փողոյն, եւ կզակոն փոխ[44թանակ ծնծզայիցն, եւ լեզուն՝ անտղկոցի, եւ բոլոր մարմինն՝ թմբի, եւ միարան՝ տալզի, ոգիս՝ քնարի, եւ զգայրանքը՝ սաղմոսարանի, զի եղիցի ամենայն մարմինն քո գործի աւրհնութեան:

15 Յարակայք ձայնից սուրբ եկեղեցոյ, զոր կարգեցին սուրբ հարքն¹⁰².

16 Աջ. «Փառք ի բարձունս Աստուծոյ». Եւ՝ «Սուրբ կոյսն նստէր ի նմանութիւն».

17 Ակ. Ասէ. «Աւրհնեցուք ճրագալուցին». Երկրորդ՝ «Առաքեա՛յ, Տէ՛ր, զլոյս քո», եւ եղիցի կիրակէին: Դի՛ր կցըրդարանի, շարական եւ արուեստի, զոր եղ նախ զիւր զիսաւսն, ըստ գրոյ ընթերց[ուած]:

18 Չորս են հայրական սկըսրան, որ անուանեցան համարք ձայնից. ո՞չ միով եղանակաւ վարին պաշտամունք ձայնից, այլ բազում վարին պէսպէս չնորհաւք: 19 Որպէս բառաչմունք եւ գոչմունք անասնոց ո՞չ են միապէս, նոյնպէս եւ ծաղիկք զանագանք ո՞չ միատե[45ասակք գոյնս ունին, եւ ո՞չ միապէս հոտ արձակին. այլ են կարմիրք եւ վարդակարմիրք, եւ հրագունակք բազմատեսակք ծաղիկք, զոր Տէր ասէ. «Եւ ո՞չ Սողոմոն յամենայն ի փառս իւր զգեցաւ որպէս մինն ի նոցանէն»¹⁰³: 20 Նայ եւ ի ներկայնոցս ոստայնանկողաց¹⁰⁴ ոմն թուխ, եւ ոմն բացատեսիլ. ի կարմրէ վարդ եւ ծիրանի, ի կապուտակէ՝ լուրջ եւ

¹⁰¹ Ա՛ տոսպտավ, տրոհով

¹⁰² տողս վերնագրի իմաստ ունի

¹⁰³ Հմմտ. Ղկ. ԺԲ. 27. Ասեմ ձեզ, եւ ոչ Սողոմոն յամենայն ի փառս իւր զգեցաւ իրրեւ զմի ի նոցանէ: Մթ. Զ. 29 Ասեմ ձեզ՝ զի եւ ոչ Սողոմոնն յամենայն ի փառս իւրում զգեցաւ իրրեւ զմի ի նոցանէ:

¹⁰⁴ Տ ոստոցնս անկողաց

կանաչ, ի գեղնէ՝ կապուաշ¹⁰⁵, որպէս եւ¹⁰⁶ գրեալ է՝ զծիրանին եւ զմիջնածիրանին, եւ զեզրածիրանին. եւ տրփող սիրամարդացն՝ արծաթազաւծք¹⁰⁷, ի գոյն ոսկոյ: 21 Թողում զզանազան փայլումն շողաւոր ականց եւ զպայծառութիւն գունակ գունակ եւ երփներփն ծաղկանցն¹⁰⁸, զոր Պաւղոս¹⁰⁹ ասէ. «Այլ ճառագայթ է արեկականն, եւ այլ փառք է¹¹⁰ լուսնին, եւ այլ ճառանչ է աս45թիւղացն, առաւել բան զմիմեանս»¹¹¹, որ են աւրինակ եղանակաց ձայնից եւ տրոհից գեղգեղմանց:

22 ԱԶ. «Փառք, ի բարձունս», ¹¹² եւ «Աւրհնեալ Տէր բնակեալն», եւ՝ «Վասն ի վերուստ» քարոզն, եւ՝ «Սուրբ կոյսն նատէր ի նմանութիւն քերորէից». եւ «Սուրբ, սուրբ, սուրբ, Տէր զաւրութեանց».

23 ԱԿ. «Աւրհնեսցուք ճրագալուցին», եւ՝ «Աւրհնութիւն կանոնաց». եւ «Առաքեալ, Տէր, զլոյս քո. եւ «Ի մերձեալ երեկոյիս»:

24 ԶԲ. «Հարցն ճրագալուցին» է. եւ «Եղիցին՝ կիրակէին». եւ պաշտաւնն Յունանու. «Ի նեղութեան իմում»¹¹³.

25 ԲԿ. Գորողացքն է չարչարանացն, եւ՝ «Թագաւորեաց միածին»¹¹⁴ Որդին» ի ստեղնէ:

¹⁰⁵ ձում՝ կապուաշ, Տ կապս ռաշ^(*). «Կապուաշ՝ է փայտ ինչ, որով ներկանեն բազում ինչ, մանաւանդ ձու. գոյն նորա է քորունին» - ՆՈՐԱՅՅԻ Ն. ԲԻՒԶԱՆԴԱՅԻ. Բառզիրք ստորին հայերէնի, Ժնև, 2000, էջ 347, Հմմա. Ս. ՄԱԼԻԽԱՅԵՍ. Հայերէն բացատրական բառարան, Հա. Բ., Երեւան, 1944, էջ 393, ըստ որի՝ այս գեղին ներկը պատրաստում են նոյնանուն ծառի կեղեւը կամ փայտը ջրի մէջ եռացնելով:

¹⁰⁶ Տ > եւ

¹⁰⁷ Տ արծաթաւծէ

¹⁰⁸ Տ > եւ զպայծառութիւն գունակ գունակ, եւ երփներփն ծաղկանցն

¹⁰⁹ Տ պողոս

¹¹⁰ Տ > է

¹¹¹ Հմմա. Ա. Կրնթ. ԺԵ. 41. Այլ փառք արեգական, եւ այլ փառք լուսնի, այլ փառք աստեղաց, եւ աստղ քան զաստղ առաւել է փառաւք:

¹¹² Տ (եւ այլն...)] եւ աւրհնեալ տէր բնակեալն (22)... արելուքն, եւ սրբութիւնք սրբոցն (26)

¹¹³ Հմմա. Յովնան, Բ. 3. Ի նեղութեան իմում աղաղակեցի առ Տէր Աստուած իմ. եւ լուաւ ինձ յորովայնէ գժոխոց աղաղակի իմում:

¹¹⁴ Ա՛ եւ միածին

26 Գ. Գրոց կարդացմունք¹¹⁵ եւ շարականք, կանոնացն, զորողայիցն, ալելուքն եւ սրբութիւնք սրբոցն. Հմորիոն, Արմեռոյ, Արիստիգէս եւ Փոռէս՝ այս Դ. վարդապէտ¹¹⁶ կազմեց/46ա/ին զմեկ[ն]ութիւն ձայնից:

ՄԵԿՆՈՒԹԻՒՆ ԶԱՅՆԻՅԾ ԱՐԱՐԵԱԼ¹¹⁷ ՍՈՒՐԲ ՎԱՐԴԱՊԵՏԱՅՑ¹¹⁸

Ա. Հ^մ 599, 46ար. Բ. Հ^մ 7117, 149ա-50ա. Գ. Ք.225, 125բ-6ա¹¹⁹

27 Ա. Է նմանութեամբ¹²⁰ գարբիելեան փողոյն, ի լոել ամենայն ննջեցելոցն՝ յառնեն եւ փութապէս ելանեն ընդ առաջ Տեառն¹²¹ յաւղս¹²²:

28 Բ. Ասէ. «Արիք ննջեցեալք, ահայ գա Քրիստոս¹²³»:

29 Գ. Ասէ. «Ի հանդիպէլն ամենայն արարածոց՝ երկրապարագն եւ ընդ¹²⁵ մի բերան ասեն. Մեղաք քեզ իբրեւ զմարդ, ողորմեաց մեզ որպէս զԱստուած, զի զու ես Աստուած, որ եկիր յատենի, եւ ամենայն սուրբք ընդ քեզ»:

30 Դ. Ասեան զնի, եւ դպրութիւնք¹²⁷ հրաշխցն բանին, եւ դպրութիւնն Մովսէսի եւ Ահարոնի¹²⁸ յայտնի¹²⁹:

¹¹⁵ ձ-ում՝ կարդ-կարդ-ացմունք

¹¹⁶ Տ գ. վարդապէտ. բնագրում՝ գ. վարդապէտ

¹¹⁷ Գ ձայնիցն զոր արարեալ են

¹¹⁸ Ա > մեկութիւն... վարդապէտացն

¹¹⁹ Գ այս մասի ունի «վասն երաժշտական ձայնիցն» և «բաժանումն ձայնից» հասուածների միջնi

¹²⁰ ԲԳ. նմանութիւն

¹²¹ ԲԳ. յառաջ: Բ տեսանն

¹²² Գ յօդս

¹²³ Ա .ձբ.

¹²⁴ ԲԳ. ~ քրիստոս զայ + թագաւորն թագաւորաց (Գ թագաւորացն)

¹²⁵ ԲԳ. ի] ընդ

¹²⁶ Ա .ձգ.

¹²⁷ Գ դպրութիւնքն

¹²⁸ Գ ահարոնի

¹²⁹ ԲԳ. յասնի + որ է (Գ > է) տախտակն տեսան

31 ԱԿ. Հալումն, ողբումն, աշխարումն¹³⁰ մեղաւորաց, որք ոչ գործեցին զարգարութիւն:

32 ԲԿ. Հուրը գեհենին յարանայ՝ որպէս զառիւծ¹³¹ առ ի կլանել զմեղաւորսն, որք ոչ հնագանդեցան Որդոյն¹³² Աստուծոյ:

33 ԳԿ. Հատեալ է վճիռ դատաստանի¹³³, զի անդարձ կորստեան հանդիպին ամենայն մեղաւորքն ի տանջանսն:

34 ԴԿ. [46թ] Արդարոցն¹³⁴ խաչանման¹³⁵ արդարութեան պսակն¹³⁶ եւ յաջակողմեան¹³⁷ դասիլն, եւ լսել զիենդանահրաւէր կոչումն Աստուծոյ Բանին, ասէ. «Եկա՛յք կամակատարքդ Հաւը¹³⁸ իմոյ, զներհունականն¹³⁹ ժառանգեցէ՛ք զանգրաւելի զիեանսն»¹⁴⁰:

35 Մտեղն Առաջի¹⁴¹ ձայնի¹⁴² առնել դատաստան բատ զրոց, զոր Տէր ասէ. «Զոր ես լսեմ դատիմ, եւ դատաստանն¹⁴³ իմ արդար դար է»¹⁴⁴:

36 ԲԶ. Մտեղն¹⁴⁵ հատանի յոյս մեղաւորաց, լալ աչացն¹⁴⁶ եւ կրծել ատամանցն¹⁴⁷:

130 **ԲԳ.** եւ աշխարումն

131 **Բ** զառիւծ

132 **ԲԳ.** որդուոյն

133 **ԲԳ.** դատաստանին

134 **Գ** արդարոց

135 **Ա** նախ զրել է՝ խաչ անմահ

136 **ԲԳ.** պսակն + կազմի

137 **Գ** յաջակողմեանն

138 **ԲԳ.** հօր

139 **ԲԳ.** > զներհունականն

140 Հմմտ. Մթ. ԻԵ. 34. Եկայք աւրհնեալք Հաւը իմոյ, ժառանգեցէք զպատրաստեալ ձեզ արքայութիւնն իսկզբանէ աշխարհի:

141 **Ա** [այսաջի]

142 **Գ** ձայնին

143 **Բ** դատաստան

144 Հմմտ Յովհ. Ե. 30. Ոչ կարեմ ես յանձնէ առնել եւ ոչ ինչ. այլ որպէս լսեմ դատիմ, եւ դատաստանն իմ արդար է:

145 **ԲԳ.** ~ ստեղն .քձ.

146 **Գ** աչաց

37 ԳԶ. Ստեղն¹⁴⁸, որ տիրէ ի վերայ մեղաւորաց խաւարն անլոյս եւ տարտարոս ցրտագին, որդն անքուն եւ հուրն անշէջ:

38 ԳԶ. Ստեղն¹⁴⁹. փոխանակ այս կերակրոյս եւ բմբելոց¹⁵⁰ ի Սուրբ Հոգոյն¹⁵¹ կերակրին եւ անմահ եւ անանց¹⁵² արքայութեանն¹⁵³ հասանել արժանաւոր¹⁵⁴ փառաց փրկաւէտ փրկչին՝ կենդանարար, կենդանագին, կենդանապործ, կենդանատու¹⁵⁵:

ԲՆԱԳԻՒԹ Բ.

ՎԱՄՆ ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ԶԱՅՆԻՑ

Ք.225, 124ր-5ր, 126ա

1 Ամենայն ձայն յերկուս բաժանի՝ ի կենդանեաց եւ յանչից, եւ անչնչից երկու՝ է՛ որ բնութեամբ, եւ է՛ որ գործեաւ: 2 Բնութեամբ՝ որպէս փայտի, երկաթոյ եւ քարանց, եւ գործեաւ՝ որպէս փողի եւ քնարի, այսինքն՝ հոռոմ Պուկն, Չանկն, Բնակ, Բարբոտն եւ այլն: 3 Իսկ չնչառուրն երկու՝ բանականն եւ անբանն. բանականն մարդոյ, եւ անբանն՝ անասնոց: 4 Բանաւորն բաժանի յերկուս, որ է արուեստիւ եւ չափով, եւ է որ անարուեստ եւ անկշիռ, որպէս՝ լացն, ծաղրն, որ չափ եւ դարպ եւ ուլուս չունին: 5 Վասն այն խոտելի է իմաստնոց ծաղրն՝ իրը զի անկարգ եւ անկշիռ իր է: 6 Իսկ իմաստունքն բազում

¹⁴⁷ Լ. 12. Եւ որդիքն արքայութեան ելցեն ի խաւարն արտաքին. անդ եղիցի լալ եւ կրնել ատամանց: Հմմտ, Մթ. ԺԳ. 42, ԺԳ. 49-50, իթ. 23, իթ. 51, իթ. 30 եւ այ

¹⁴⁸ ԲԳ ~ ստեղն գձ.

¹⁴⁹ ԲԳ ~ ստեղն գձ.

¹⁵⁰ ԲԳ կերակրոցս եւ բմբելոցս (Գ բմբելացս)

¹⁵¹ Գ հոգւոյն

¹⁵² Ա անացն

¹⁵³ Գ արքայութեան

¹⁵⁴ ԲԳ արժանաւորին

¹⁵⁵ ԲԳ սուրբ երրորդութեանն (Գ երրորդութեան) ամէն] կենդանարար... կենդանատու, Ա յաւելում թովմա Մնծոնիեցո՞ւ՝ կենդանատու + կենդանարաշին, կենդանասաեղծ, հրավառ, հրանիթ, հրահռս, հրարուն, համահաւասար, հրափայլ, սուրբ երրորդութեանն, յաւիտեանս. ամէն. փառք աստուծոյ. ամէն

աշխատութեամբ գտել են զգործիս ձայնական երգոցդ, որ բառնան զինութեան երակքն՝ որպէս Զանկն. Երթայ տրոտմութիւնն եւ հոգն, եւ ոյժ առնու հոգին, զի ձայնն անմարմնութեան մասն ունի. եւ ազգակից հոգւոյն, եւ ուրախանայ հոգին՝ յորժամ լոէ զձայնն |125ա| ազգակցին եւ ազդէ զուրախութիւնն ի մարմինն: 7 եւ իմաստութեամբ իմաստունքն առաջինք յարմարեցին զբար-րուտն ի վերայ բնութեան մարդոյն՝ ի նմանութիւն չորից տա-րեցս:

8 Զի՞լն զբնութիւն հրոյ ունի, որ է տաք եւ չոր:

9 Երկու լարն, զոր Տութայ ասեն, նման Սաֆրային է:

10 Երրորդ լարն, որ է Սեթայն՝ նման Սափդաին:

11 Չորրորդ լարն կոչի Պամ. այն պլղամին է:

12 [Պ]լղամն արեան հակառակ է Զիլին, որ է արեանն: 13 թէ ոք յարենէ հիւանդ է մերձ նստեալ երգեն զՊամն, ի Պար-պուտին աւգոյէ եւ հա[ն]գուցանէ զմարմինն: 14 Եւ թէ հիւան-դութիւն ի պլղամէն է, զԶիլն երգեն, որ տաք ու չոր է եւ պլղա-մին հակառակ: 15 Եթէ սաֆրայն շատացել է, լինի առ մարդն, չէ պարտ զԶիլն երգել, զի տաք եւ չոր եւ հրային է, եւ սաֆ-րայն այլ նոյն է, այլ զՊամն, որ հով եւ գէջ է եւ յաղթող սաֆ-րային:

16 Առաջին Զիլն բնութիւն հրոյն է տաք եւ չոր:

17 Երկորդ լարն, որ է Տօթայն, աւգն է տաք եւ զիճային:

18 Երրորդ լարն, որ է Սեթայն, հող է, հով եւ չորային:

19 Չորրորդ լարն Պամն. այն ջուրն է, հով եւ զիջային:

20 ԶՊամն ու զԶիլն յարմարել ընդ յիրարս՝ մուհթաղիլ¹⁵⁶ է եւ միջակ եւ աւգտակար բնութեանն:

21 Եւ այսպէս գտին զստեղք ձայնիցն իմաստունքն. եւ տանն եւ երկու փարտաին որիշ որիշ անուն դրին. եւ զմեծ ի-մաստութիւնն հոգւոյն նիւթական գործաւ ի լոյս ածին:

22 Ով որ չհասկնայ զփարտայքն՝ որպէս յաշխատանք կայ յըմպել գինւոյն, եւ եթէ ոք հիւանդ է եւ հասկանա զզաւրու-թիւն ձայնին՝ զառնա յուշ եւ զօրութիւն առնու: 23 Եւ այս էր՝ որ ի հնումն առ հիւանդին երգէին. եւ առաւել աւգտէր՝ քան զըմպելիս դեղոց: 24 Նոյնպէս թէ ի հոգին է ցան, որ է տըրտ-

¹⁵⁶ Մուհքատիլ - արար-պարսկ.՝ չափաւոր, քարեխառն, մնդմ, միջին, մի-չակ-Միջին հայերէնի քառարան, հ. Բ., Երևան, 1992, էջ 148:

մութիւնն, փարատի: 25 Եւ այս յայտ ի տղայոցն երեխալից, զի ունի զարութիւն հոգին, որ աւրաւըք ածելով՝ քնի քաղցրաձայնու/125թեամբն հեշտացեալ, զի ձայն անմարմին էր, եւ հոգին անմարմին, փառաւորի հոգին՝ յորժամ տեսանէ զիւր նմանն: 26 Վասն որոյ եւ մարդարէն Դաւիթ քնարաւ երգէր, եւ այլքն ի մարդարէիցն քնարերգութեամբ կոչէին զՀոդին ի զուարթանալն հոգւոյն¹⁵⁷:

ԲԱԺԱՆՈՒԻՄՆ ԶԱՅՆԻՑ

Ք.225. 126ա

27 Զոր բաժանեաց ի միմեանց սուրբ Հայրապետն հոգելի իսահակ՝ Ժ. ձայն՝ ըստ թուոյ Ժ. արարածոց եւ Ժ. բանի պատղամացն Մովսէսի, եւ Ժ. Հարուածոցն Եղիապտ[ոսի], եւ Ժ. փորձանաց Աբրահ[ամու], եւ Ժ. դասուց բանականաց՝ Թ. դաս հրեշտակաց եւ մի մարդկան, եւ Ժ. մատանց մարդոյ, եւ Ժ. աղի քնարին Դաւիթի եւ Ժ. փեղկ խորանին վկայութեան, եւ այլ բազմաց աւրինաց, որ զժ. թիւն ունին յինքեան: 28 Զի Ժ. սուրբ Էնուէր Աստուծոյ եւ կատարեալ թիւ, որ առնէ զհարիւրն, զհազարն եւ զրիւրն: 29 Եւ ինքն Ժ. ի չորից գոյանայ եւ է ամենայնի կատարումն: 30 Այսպէս եւ ի Դ. ձայնից Ժ. բարդեցաւ: 31 Եւ Դ. ձայնքն ի չորից տարեց ունին զգոյութիւն, որպէս եւ է Առաջի ձայնն ի հոգոյն, Երկրորդն ի ջրոյն, Երրորդն ի յաւգոյն, Չորրորդն ի հրոյն: 32 Եւ Դ. ձայնիցն բաժանեաց Դ. կողմն՝ Ակ, Բկ, Գկ, Դկ, եւ Բ. ստեղին, որք ունին եւ այլ յատնութիւնս, զի ԱԶ. ի հիւսնականէն է, Բ.՝ ի դարբնաց, Գ.՝ զետոց, Դ.՝ յաղորաց, Ե.՝ յերկաթոյ, Զ.՝ ի ծփանաց ծովու, Է.՝ ի ծովու կենդանեաց, Լ.՝ յանասնոցն, Թ.՝ զազանաց, Ժ.՝ թռչնոց, որով միշտ փառարանի Աստուծած յերկինս:

ԳԵՂԻՐԴ ՏԵՐ-ԱԱՐԴԱՆԵՍՆ

¹⁵⁷ սրանից յիսոյ է ա. բնագրի 27-38 մասը

The musicological texts of the Metzop Monastery School

GEVORG DER VARDANIAN

(summary)

This article studies mss. 599 and 7117 of the "Mashdotz" Library in Yerevan and ms. 225 of the Kurdish collection of the Mekhitarist Library in Venice. Manuscripts' dates, place and others issues are examined. Ms. 599 was clearly written around mid-fourteenth century. Later, in 1413, Thomas Metzopetzi found it in bad shape in the monastery of the village of Aghet (in Khlat). After revamping it, he took it to the monastery of Metzop. Afterwards, in 1440, he prepared a grammatical-linguistic textbook for his school was based on this manuscript (Ms. 7117). Vardapet Hovhannes Baridzoretzi employed this manuscript or its copy to write down the manuscript of Kurdish collection (ms. 225) in 1596-1597 in the monastery of Baridzor, near Khizan, and in Lvov.

We publish two texts about theory and interpretation of musical tones on the basis of these three manuscripts used in the monasteries of Metzop and Baritzor. In this way, we correct the mistakes found in the text of the previous publication (A. Arevshadyan, Yerevan, 2003).